

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՏԻՊԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գ. Ա. ՍՈՂՈՍՆՅԱՆ

Հասարակության ու անձի փոխհարաբերության, հասարակական հարաբերությունների, արժեքների և նորմերի անհատականացման, անհատի կողմից դրանց յուրացման ու վերարտադրության պրոբլեմներն անցումային հասարակություններում ձեռք են բերում առանձնահատուկ տեսական ու գործնական հնչեղություն: Առավել ևս, որ որոշ հետազոտողներ, անցումային հասարակության վերարտադրության և զարգացման ողջ համակարգը դիտարկելով որպես անդեն ու դեռևս չձևավորված հարաբերությունների ամբողջություն, անտեսում են անհատականի ու անհատականացման տեղն ու դերը մասշտաբային այդ փոփոխություններում: Միհնչդեռ տրանսֆորմացիաների մարդկային իմաստն ու բովանդակությունը վեր հանելու և իմաստավորելու առումով սոցիալական կյանքի ուսումնասիրության հիմնականում այլ՝ սոցիալականից անհատականին անցման, հասարակական հարաբերությունների անհատականացման սկզբունքն իմացաբանական մեծ դեր ունի անցումային համակարգերի հասարակական կեցության անհատական ձևերի ճանաչողության համար:

Մասնագիտական գրականության մեջ անցումային հասարակությունը քննարկվում է ամենատարբեր տեսանկյուններից¹: Ներկա հոդվածում այն քննարկվելու է հասարակական հարաբերությունների ու արժեքների անհատականացման և տիպականացման առանձնահատկությունների առնչությամբ:

Հասարակականը և անհատականը հանդես են գալիս դիալեկտիկական միասնության մեջ, և դրանց հակադրությունը կամ կողմերից մեկի բացարձակացումը և զերազնահատումը, ինչը խիստ բնորոշ է անցումային հասարակություններին, կարող են հանգեցնել ոչ միայն տեսական-մեթոդաբանական, այլև պրակտիկ-գործունեական նշանակություն ունեցող բազմաթիվ խնդիրների խեղաթյուրման, միակողմանի մեկնաբանության և ոչ արդյունավետ լուծման:

Դիմամիկ ու տրանսֆորմացվող կեցության հասարակական և անհատական ձևերի փոխադարձ անցման էությունն ըմբռնելու խնդիրը պայմանավորում է անցումային հարաբերությունների անհատականացման և տիպականացման դիալեկտիկայի սոցիալ-փիլիսոփայական վերլուծության օբյեկտիվ անհրա-

¹ Տե՛ս "Социальная идентичность и измерение ценностного сознания в кризисном обществе". Ред. Н. Шматко. М., 1992; **Н. Ф. Наумова**, Жизненная стратегия человека в переходном обществе. "Социологические исследования", 1995, No 2; **А. Н. Данилов**, Переходное общество: Проблемы системной трансформации, Минск, 1998; Трансформации в современной цивилизации: постиндустриальное и постэкономическое общество (материалы "круглого стола"). "Вопросы философии", 2000, No 7; **П. Штомпка**, Культурная травма в посткоммунистическом обществе. "Социологические исследования", 2001, No 2; **Է. Ա. Հարությունյան**, Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Եր., 2000:

ժեշտությունը: Հասարակության՝ որպես որոշակի կապերի և հարաբերությունների մեջ գտնվող մարդկանց համախմբության բուն իմաստն ու բովանդակությունն իր իսկ վերարտադրությունն է, որի իրականացման անհրաժեշտ և էական պայմանը հասարակության յուրաքանչյուր անհատի կողմից սոցիալականության պատմականորեն ձևավորված տվյալ տիպին բնորոշ հասարակական հարաբերությունների, արժեքների ու նորմերի առավելագույն անհատականացումն է: Սոցիալ-փիլիսոփայական տեսանկյունից՝ վերարտադրությունը հենց հասարակական տիպական արժեքների, նորմերի ու գաղափարների անհատականացման եղանակ է: Այն հանգամանքը, որ հասարակական կյանքի անընդհատ վերարտադրությունն ու վերակառուցումը կանխադրում է հասարակական հարաբերությունների ու արժեքների անհատականացում, սոցիալական կյանքի գոյության ու գործառնության ձևերի անհատական դրսևորում և իրացում, ամենևին չի նշանակում, թե դրանք ինքնին գոյություն ունեն ոչ անհատական, անդեմ ձևով: Հասարակության մեջ չկան և չեն կարող լինել այնպիսի հարաբերություններ ու արժեքներ, որոնց ստեղծողն ու կրողը մարդը չէ: Անհատականացումը հասարակականի և անհատականի փոխհարաբերության այն եղանակն է, որի ժամանակ ընդունվում կամ մերժվում է համակարգի տրանսֆորմացիայի անհրաժեշտությունը: Հասարակական հարաբերությունների անհատականացումն ապահովում է անձի լինելիության և սոցիալական վերարտադրության անընդհատությունը:

Սոցիալական միանման պայմանները տարբեր մարդիկ տարբեր կերպ են ընկալում, յուրացնում, և, հետևաբար, տարբեր կարող է լինել նաև վերաբերմունքը դրանց նկատմամբ: Միևնույն հասարակության պայմաններում ապրող և գործող մարդիկ հասարակական հարաբերությունների ու արժեքների կրման ու վերարտադրության ընթացքում տարբեր դեր են կատարում: Յուրաքանչյուր անհատ օժտված է անկրկնելի, միայն իրեն բնորոշ առանձնահատկություններով, ունի շահեր ու արժեքային կողմնորոշումներ և ըստ այդմ էլ՝ տարբերակված, ընտրողական վերաբերմունք է ցուցաբերում տրանսֆորմացիոն իրականության և գործող սոցիալական հարաբերությունների ու արժեքների նկատմամբ: Թեև առանձին անհատները տարբեր ձևով են ներառվում գործունեության համակարգի մեջ, տարբեր չափերով են առնչվում տրանսֆորմացվող հասարակական հարաբերությունների հետ ու վերջինները հագեցնում իրենց անհատական շահերով ու պահանջներով, բայց և այնպես այդ գործընթացն իր էությանմբ բացարձակապես ինքնատիպ ու անկրկնելի չէ, ինչպես թվում է առաջին հայացքից: Անհատական կեցությունն ու կենսագործունեությունը, իր ողջ ինքնատիպությամբ հանդերձ, ենթադրում են նաև ընդհանրացման, տիպականացման դրսևորում: Հասարակական հարաբերությունների և արժեքների անհատականացումը՝ որպես սոցիալական համակարգի տրանսֆորմացիայի, գործառնության ու վերարտադրության անհատական գոյաեղանակ, պայմանավորում է նաև անհատականի հասարակականացումը, տիպականացումը: Անհատականացման և տիպականացման միջև չկան անհաղթահարելի պատնեշներ, դրանք դիալեկտիկորեն փոխպայմանավորված սոցիալական իրողություններ են, որոնց գործառնությամբ իրականացվում է հասարակական կապերի ու հարաբերությունների, սոցիալական արժեքների ու նորմերի վերարտադրությունն ու զարգացումը: Առանց հասարակականի անհատականացման՝ հասարակական կյանքը կմնանվեր անկենդան, միապաղաղ «սոցիալական շարժանկարի»: Հասարակական կյանքը եզակի ու պատահական խայտաբղետ փաստերի հասարակ, չհամակարգված արձանագրություն կդառնար, եթե անհատականի տիպականացման միջոցով հնարավոր չլիներ քիչ թե շատ ամբողջական պատկերացում կազմել հասարակական տարաբնույթ կապերի և հարաբերությունների էության մասին: Հասարակական հարաբերությունների ու արժեքների անհատականացումը ենթադրում է տիպա-

կանացում, իսկ տիպականացումն՝ անհատականացում²: Հակադրամիասնությունների ձևով հանդես եկող այս գործընթացների իրացմամբ պահպանվում է հասարակական կապերի ու հարաբերությունների ամբողջական սոցիալական համակարգը: Եթե նախորդ սերունդների նվաճումների ու փորձի պարզ կրկնությունը հնարավոր է շրջապատող իրականության նկատմամբ մարդու ռեպրոդուկտիվ վերաբերմունքի շնորհիվ, ապա գործունեության և հասարակական հարաբերությունների տրանսֆորմացիան ու կատարելագործումը պահանջում են ստեղծագործական նոր կարողությունների դրսևորում և անընդհատ զարգացում: «Իբրև հասարակական գործունեության և հարաբերությունների սուբյեկտ՝ անհատը, որոշակի իմաստով, ձևավորվում է «հար և նման» այն հասարակությանը, որում ընթանում է նրա կենսագործունեությունը: Սակայն, մարդը գոյություն ունեցող հասարակական ձևերի պասսիվ ծեփապատճենը, ընդօրինակումը չէ, նա ստեղծագործ ու ակտիվ էակ է, նրա կոչումը սեփական գոյության և զարգացման պայմանների ստեղծումն է: Այդ պատճառով գոյություն ունեցող միջավայրին հարմարվելը և նույնիսկ գործունեության մեջ առկա պայմանների հասարակ վերարտադրությունը մարդկային վարքը բաղադրող համընդհանուր օրենքներ չեն: Մարդկային գործունեությունն իր զարգացման նոր պայմանների ստեղծագործությունն է. գոյություն ունեցողի վերարտադրությունը ներառված է այդ գործընթացի մեջ իբրև նրա պահ և պայման»³: Տրանսֆորմացիոն գործունեության ընթացքում մարդը դրսևորում է ոչ միայն իր անհատականությունը և անհատական շահերը, այլև այն ընդհանուրը, սոցիալականը, ինչը կարող է դրսևորվել նաև մյուս մարդկանց էությունական ուժերի մեջ: Այլ կերպ ասած, գործունեության, հասարակականի անհատականացման ընթացքում մարդը նախադրյալներ ու պայմաններ է ստեղծում ոչ միայն մյուսներից տարբերվելու, անհատականության ձևավորման ու դրսևորման համար, այլև իր և իրեն նմանների միասնության, նույնության, այսինքն՝ անհատականի հասարակականացման, տիպականացման համար: «Անհատականացման և տիպականացման երևույթները... ապահովում են վերարտադրական պրոցեսների կապը զարգացման հետ: ...անհատականացման պրոցեսն ապահովում է հասարակական հարաբերությունների վերարտադրության համարժեքությունը, նրանց որակական որոշակիությունն ու կայունությունը, իսկ տիպականացման, անհատականը հասարակականին հանգեցնելու երևույթն արտահայտում է հասարակական հարաբերությունների շարժունությունը, նրանց զարգացման վերընթացությունը»⁴:

Սոցիալական այս երևույթների վերոհիշյալ գործառույթները բնորոշ են տրանսֆորմացիոն իրականության բնականոն, հարաբերաբար կայուն փուլերի համար: Իրավիճակը, սակայն, էապես փոխվում է ռիսկի գոտի մտած, համակարգային տրանսֆորմացիաների դատապարտված, հավատի ու վստահության սակավությունից տառապող, ճգնաժամային գործառության ու պատմական հեռանկարի անորոշությամբ համակված անցումային հասարակության համար: Որոշակիությունն ու կայունությունը, շարժունությունն ու զարգացումը պայմանավորող հասարակական հարաբերությունների անհատականացման ու տիպականացման գործընթացներն այստեղ գոյության ու դրսևորման նոր հիմունքներ են գտնում:

² Հասարակության զարգացման տարբեր փուլերում անհատականացման և տիպականացման առանձնահատկությունների մասին տե՛ս **С. С. Батенин**, Человек в его истории. Л., ЛРУ, 1976; **Б. К. Лебедев**, Исторические формы социальных типов личности, Казань, 1977; **В. М. Межуев**, Культура и история, М., 1977; **В. Ж. Келле, М. Я. Козользон**, Терия и история, М., 1981; **Ա. Ա. Հովսեփյան**, Հասարակական հարաբերությունների վերարտադրության սոցիալ-փիլիսոփայական պրոբլեմները, Եր., 1986:

³ **Л. П. Буева**. Человек: деятельность и общение. М., 1978, с. 58.

⁴ **Ա. Ա. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 53:

Անցումային հասարակություններում անհատականացման ու տիպականացման պրոբլեմն ավելի է կարևորվում, քանի որ տեղի են ունենում համակարգային այնպիսի փոփոխություններ, որոնք առնչվում են հասարակարգի սոցիալ-տնտեսական, գաղափարաքաղաքական ու բարոյախոգեքանական հիմունքներին: Բնականաբար նման համակարգը շահագրգռված է, որպեսզի այդ փոփոխություններն իմաստավորվեն ու անհատականացվեն, որպեսզի դրսևորվող շեղումներն ու խոտորումները չնպաստեն սոցիալականության տվյալ տիպի ամբողջականության տրոհմանը, չլինեն համակարգակործան հակասություններ, այսինքն՝ անձի սոցիալական արտադրությունն ու վերարտադրությունն իրականացվի տվյալ անցումային հասարակության խնդիրներին ու նպատակներին համապատասխան: Քանի դեռ հասարակության առանձին անդամները տրանսֆորմացիոն գործընթացները չեն իմաստավորել, այդ փոփոխություններն առարկայազուրկ և ինչ-որ իմաստով արտաքինից (համակարգի կողմից) պարտադրված հանգամանքներ են: Այս փաստն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական մեծ նշանակություն, քանի որ հասարակության սոցիալապես անպաշտպան մեծամասնությունը, եթե նաև համակարգի տրանսֆորմացիայի անհրաժեշտության պահանջը անհանցում է իր սոցիալական վիճակից, համակարգային փոփոխությունների ընթացքում ենթարկվում է ոչ միայն սոցիալական, այլև արժեքային-գաղափարական օտարման: Մյուս կողմից՝ ցանկացած համակարգային տրանսֆորմացիա համակարգաստեղծ իր գործառույթը իրագործելու համար պետք է արդեն անհատականացված տրանսֆորմացիոն արժեքները տիպականացնի, որպեսզի մարդկային գործունեությունը ծառայեցնի համակարգային օրինաչափությունների ձևավորմանը:

Տրանսֆորմացիոն հասարակություններում, որտեղ նաև չկա նորմերի միասնական և կայուն համակարգ, սոցիալական բազմաթիվ արժեքներ սկսում են հակասել միմյանց: Երկար տարիներ մարդկանց վարքը կարգավորող արժեքների ու նորմերի բախումը «վերափոխված» հասարակության արժեքների ու նորմերի հետ զարգացման որոշակի աստիճանում վերածվում են կոնֆլիկտի: Բխվվող արժեքների ու նորմերի բազմաքանակությունը, անորոշությունը և դրանցով պայմանավորված՝ վարքի հնարավոր ընտրության հետ կապված խնդիրները հանգեցնում են սոցիալական անոմիաների: Նման իրավիճակի պատճառը ոչ թե այն է, որ հասարակությունը նորմեր և արժեքներ չունի, այլ ճիշտ հակառակը՝ իրարամերժ արժեքային համակարգերն այնքան շատ են, որ անհատին հնարավորություն չեն ընձեռում հստակորեն կողմնորոշվելու դրանցում⁵: Անոմիան մի «վիճակ է, երբ մարդկանց զգալի մասը գտնվում է այնպիսի դրության մեջ, ինչը բնութագրվում է կայուն սոցիալական ինստիտուտների հետ ինտեգրվելու լուրջ թերությամբ, հանգամանք, որը էական է ինչպես իրենց սեփական անձնական կայունության, այնպես էլ սոցիալական համակարգերի հաջող գործառնության համար: Նման իրավիճակի նկատմամբ սովորական արձագանքը վարքի անհուսալիությունն է»⁶: Այս առնչությամբ կարելի է ասել, որ անոմիան թեև հանդես է գալիս որպես ընտրության ազատության արդյունք, բայց այն հիմնված չէ իրականության կայուն ընկալման վրա, և նրան բնորոշ է ընտանիքի, պետության և հասարակության այլ հիմնական ինստիտուտների հետ փոխհարաբերությունների անորոշությունը և անկայունությունը: Անոմիան հանդես է գալիս այնտեղ և այն ժամանակ, երբ համակարգային տրանսֆորմացիաների հետևանքով աններդաշնակ իրավիճակ է ստեղծվում ցանկալի մշակութային արժեքների և նպատակների ու դրանց իրականացման լեզու (ինստիտուցիոնալ) եղանակների միջև: Հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական ու քաղաքական քառուր և օրինական

⁵ Տե՛ս Յ. Օ. Դյորկհեյմ, *Разделение общественного труда. Метод социологии*. М., 1991, էջ 379-380:

⁶ T. Parsons, *The social system*. L., 1951, p. 125-126.

ճանապարհով այն հաղթահարելու դժվարությունների պատճառով հասարակության առանձին անդամը փորձում է գտնել նպատակներին հասնելու ոչ լեզալ, ընդունված մշակութային կարգից շեղվող արտահինստիտուցիոնալ միջոցներ ու եղանակներ:

Նորմատիվ և արժեքային հստակ կողմնորոշիչների բացակայությունը մարդկանց համակում է անօգնականության և սոցիալական մեկուսացվածության գիտակցությամբ: Անցումային հասարակության սոցիալական ախտանիշներ են դառնում անորոշությունը, անվստահությունը, տագնապն ու վախը: Նախկինում գործող կանոններն ու նորմերն այլևս անօգտակար, անհուսալի և անհասանելի են թվում, իսկ նորերը՝ խորթ, անարժան, ինչը, ի վերջո, հասարակության մեջ գերիշխող է դարձնում սոցիալական անբավարարվածության զգացումը: Սոցիալական անբավարարվածությունն անցումային հասարակության մեջ գործող հասարակական հարաբերությունների ու արժեքների ռուտինականության, ինչպես նաև կյանքի ընդհանուր պայմանների նկատմամբ մարդկանց դժգոհության արդյունք է: Եվ որքան մեծ է հույսերի ու անկնկալիքների և դրանց պրակտիկ իրացման միջև գոյացած վիճը, այնքան ուժեղ է սոցիալական անբավարարվածության զգացումը: Այս պայմաններում, փաստորեն, ոչ հասարակությունն է կարողանում ապահովել համակարգապահական գործառույթների (անհատականացում և տիպականացում) իրագործումը, և ոչ էլ մարդն է շահագրգռված դրանց իրացմամբ: Անցումային համակարգերում սոցիալականի անհատականացման պայմանները երկակի ազդեցություն ունեն անհատի սոցիալ-հոգեբանական տիպի ձևավորման վրա: Առաջին՝ այդ պայմանները զարգացման ընթացքում ձեռք են բերում այնպիսի արժեքային-գաղափարական բովանդակություն, որը չի համապատասխանում անհատի տվյալ տիպի արժեքային կողմնորոշումներին, շահերին ու պահանջումներներին: Նման դեպքերում տեղի է ունենում սոցիալականի ու անհատականի փոխադարձ օտարում, և, արդյունքում, ոչ մարդն է շահագրգռված անհատականացնել, յուրացնել իշխող սոցիալական արժեքները, ոչ էլ հասարակարգն է նպաստում սոցիալականի անհատականացման մեխանիզմների օպտիմալ գործառնությանը: Այս դեպքում համակարգային տրանսֆորմացիաների նախաձեռնողի ու շարժիչ ուժի դերում տարերայնորեն հանդես է գալիս անհատը: Երկրորդ՝ քանի որ ցանկացած սոցիալական համակարգի գոյության ու ինքնավերարտադրության միակ ռեալ եղանակը սոցիալական կեցության անհատական դրսևորման մեջ է, այդ պատճառով էլ հասարակության ու անհատի օտարվածության պարագաներում տրանսֆորմացիոն գործընթացների «նախաձեռնողի» դերում հանդես է գալիս նաև համակարգը, որպեսզի փոխելով իր վերարտադրության, զարգացման ու գործառնության հիմունքները՝ փոխի նաև մարդուն և բնականոն հունի մեջ դնի հասարակականի անհատականացման ու անհատականի տիպականացման համակարգապահական գործընթացը: Ասվածից հետևում է, որ անցումային հասարակություններում տրանսֆորմացիոն գործընթացների դրական կամ բացասական էլքը պայմանավորված է նրանով, թե այդ փոփոխությունների արդյունքում որքանով են կատարելագործվում սոցիալական արժեքների, հարաբերությունների ու նորմերի անհատականացման ու տիպականացման պայմաններն ու մեխանիզմները:

Հասարակական հարաբերությունների ու արժեքների անհատականացման ու տիպականացման առանձնահատկություններն անցումային հասարակություններում պայմանավորված են նաև սոցիալական մոբիլության կրտրուկ աճով⁷:

Հասարակության անդամների մի զգալի մասը սոցիալ-տնտեսական տրանսֆորմացիաների պատճառով արագ, ինքնակամ կամ հարկադրաբար

⁷ Տե՛ս Ս. Сорокин, Человек. Цивилизация. Общество. М., 1992, էջ 37:

(երբեմն ճարահատյալ) փոխում է իր սոցիալական դերն ու դիրքը, պրոֆեսիոնալ շատ խմբեր անհետանում են, մյուսները փոխում են իրենց կարգավիճակը, առաջանում են նորերը: Նման պարագաներում նվազում է այս կամ այն խմբում լիովին արմատավորվելու և հասարակական հարաբերությունների տրանսֆորմացիոն գործընթացների մեջ ներառվելու հավանականությունը, ինչն իր հերթին թուլացնում է ոչ միայն մարդկանց վրա սոցիալական վերահսկողության հնարավորությունը, այլև զրկում է նրանց որևէ խմբին իրապես պատկանելու հուզական բավարարումից: Արդյունքում, սոցիալական անբնական շերտավորման հետևանքով առաջանում են «ինքնավար» ապրելակերպի առանձին ենթահամակարգեր, որոնց համար հասարակական կարծիքն այլևս չունի գործնական որևէ նշանակություն, և այդ ենթահամակարգերը հակված են համակարգային ողջ տրանսֆորմացիաները հարմարեցնել ու ծառայեցնել իրենց շահերին:

Այսպիսով, անցումային հասարակություններում սոցիալականի անհատականացման բնորոշ առանձնահատկություններից մեկը հենց այն է, որ տարբեր սոցիալական դեր, դիրք ու շահեր ունեցող մարդիկ տարբեր կերպ են ընկալում ու գնահատում սկսված գործընթացները: Հենց այն պատճառով, որ անցումային հասարակություններում, տրանսֆորմացիայի են ենթարկվում նաև սոցիալական խավերն ու շերտերը, փոխվում են դրանց տեղն ու դերը սոցիալական կառուցվածքում, մարդիկ միանշանակ չեն ընդունում և անհատականացնում իրագործվող փոփոխությունների իմաստն ու բովանդակությունը, ինչն ի վերջո հանգեցնում է ազգաբնակչության մի մասի աստիճանական մարգինալացմանը⁸: Նման պայմաններում բարձրանում է մարդկանց սոցիալական ընկալունակությունը, սրվում է սոցիալական անարդարության զգացումը: Այս դեպքում սոցիալական կարգավիճակի կորուստը կամ այն կորցնելու սպառնալիքն անհատի համար ավելի մեծ չարիք է, քան նրա տեղափոխումը կարգավիճակային այնպիսի խումբ, ուր նրա դիրքերը կլինեն մարգինալ և անհուսալի: Տրանսֆորմացիոն մոբիլության արդյունքում իր սոցիալական նախկին կարգավիճակից զրկված, տրանսֆորմացված անհատը համակվում է ատելության մեծ չափով, այնպես էլ այդ արժեքներին սահուն ինտեգրված մարդկանց նկատմամբ:

Քաղաքական և տնտեսական համակարգերի արմատական տրանսֆորմացիան և դրա արդյունքների իրավական, օրենսդրական ամրագրումը իրականացվում են հարաբերականորեն կարճ ժամանակաշրջանում, մինչդեռ հասարակական նախկին հարաբերությունները տևական ընթացքում անհատականացրած գիտակցությունը չի կարող նույն արագությամբ փոփոխությունների ենթարկվել, ինչը, բնականաբար, սոցիալական լարվածության և արժեքային կոնֆլիկտների պատճառ է դառնում⁹: Արժեքային կոնֆլիկտը հստակորեն ընդգծված գաղափարախոսական բնույթ ունի, քանի որ այստեղ բխվում են հասարակական զարգացման նպատակների մեկնաբանության տարբեր, երբեմն տրամագծորեն հակադիր տեսակետներ: Հետհամայնավարական հասարակությունների տիպական հատկանիշներից մեկը դառնում է «սոցիալիզմի տապալումից հետո դրա պայմաններում ապրելու» ձգտումը: Եթե հասարակությունը դյուրությամբ բաժանվեց նախկին հասարակարգի արտաքին ատրիբուտներից, ապա «ներքին կոմունիզմը» ավելի կենսունակ գտնվեց: Սոցիալիզմի ժամանակաշրջանում պետության նկատմամբ մշակված վերաբերմունքը, «կոլեկտիվիստական արժեքների համակարգը հակասության մեջ են մտնում արժեքների ազատական համակարգի հետ... Կարելի է պնդել, որ արժեքային

⁸ Տե՛ս **И. П. Попова**, Маргинальность. Социологический анализ, М., 1998; **Е. В. Садков**, Маргинальность и преступность. "Социологические исследования", 2000, № 4:

⁹ Տե՛ս **А. Н. Данилов**, նշվ. աշխ., էջ 14:

կոնֆլիկտը հասարակական գիտակցության կառուցվածքի արմատական տրանսֆորմացիայի պարտադիր և անխուսափելի բաղադրատարրն է ... և, որ համակարգային ճգնաժամից դուրս գալն ավելի երկար ժամանակ կպահանջի, քան ենթադրվում էր»¹⁰: Սոցիալական կարգի, կայուն համակեցության հաստատման անհրաժեշտ նախադրյալն արժեքների յուրահատուկ համակարգի ընդունման վրա հիմնված հասարակական հարաբերությունների ուսցիոնալացման որոշակի մակարդակն է: Միշտ է, ժամանակակից քաղաքակրթությունը ենթադրում է հանդուրժողականության բավականին լայն սահմաններ, այսինքն՝ տարբեր աշխարհայացքային համակարգերի և արժեքային տարբեր կողմնորոշումների կողմնակից մարդկանց կամ սոցիալական խմբերի ու շերտերի շփման ու համագործակցության հնարավորություններ, սակայն հանդուրժողականությունը դեռևս արժեքային կողմնորոշումների միջև գերիշխող եղանակ չի դարձել: Իսկ համակարգային տրանսֆորմացիաների փուլ մտած անցումային հասարակություններում անհանդուրժողականությունը դառնում է մարդկային վարքը բաղադրող հիմնական գործոն: Մարդիկ բաժանվում են յուրայինների և օտարների, «մերոնց» և «նրանց», իսկ այս բաժանման հիմքում ընկած տարբերությունները դառնում են անհատական կամ խմբային վարքը պայմանավորող դրոպապատճառների որոշիչ, գերիշխող համախումբ: Անցումային հասարակությունում ցանկացած հակասություն արժեքային, աշխարհայացքային բնույթ և պայմանավորվածություն է ստանում: Արժեքային կոնֆլիկտների առանձնահատկությունն այն է, որ դրանք հիմնվում են համոզմունքի վրա: Հենց այդ համոզմունքին համապատասխան էլ կառուցվում է բանական փաստարկների այն համակարգը, որը բացատրում և արդարացնում է համոզմունքների ելակետային սիմվոլները, այսինքն՝ այն հիմնադրույթները, որոնց հիմքի վրա կառուցված է արժեքների տվյալ համակարգը: Ինչ փաստարկներ էլ որ բերվեն հօգուտ հասարակական այս կամ այն կարգի առավելության, միևնույն է, դրանց բոլորի հիմքում ընկած է լինելու այն համոզմունքը, որ հասարակական կարգի կազմակերպման լավագույն եղանակն այն է, որն ապահովում է անհատի գերակայությունը հասարակական ամբողջի համեմատ և կամ հակառակը՝ հասարակական ամբողջի գերակայությունն անհատական ձգտումների համեմատ: Ըստ այդմ, անհատի և հասարակության փոխհարաբերությունների պրոբլեմի առնչությամբ կարող են ձևավորվել արժեքային կողմնորոշումների երկու տարբեր և կամ հակադիր (կոլեկտիվիստական կամ անհատապաշտական) համակարգեր:

Կայուն հասարակություններում հասարակական հարաբերությունների ու արժեքների գերիշխող տիպը և սոցիալական բոլոր ինստիտուտները նպատակամղված են դրանց առավելագույն անհատականացման և տիպականացման ապահովմանը: Անցումային հասարակություններում հասարակական արժեքներն ու նորմերը հարաբերական բնույթ ու պայմանավորվածություն են ստանում: Սոցիալական ժամանակի արագացած դիթմն անցումային հասարակություններում հնարավորություն չի ընձեռում խորապես ըմբռնելու կատարվող տրանսֆորմացիոն գործընթացների էությունը, հետևաբար արժեքներն ու նորմերը, ստանալով իրադրային իմաստ, ձեռք են բերում սահմանափակ շրջանակներում դրսևորվելու միտում: Անցումային բոլոր հասարակություններում արժեքային գերակայություն է ստանում «հենց այստեղ և հենց այս պահին» անհանդուրժող սկզբունքը՝ շատ հաճախ պարտադրելով ամեն ինչ դիտարկել նյութական և կամ կենսաբանական պահանջմունքների տեսանկյունից, երբեմն՝ անզամ իսկ անտեսելով համամարդկային արժեքներն ու նորմերը: Անցումային հասարակություններին բնորոշ գոյատևման անհատական կենսաձևը և սոցիալական արժեքների տիպականացման դժվարություններն

¹⁰ Նույն տեղում, էջ 55:

ստեղծում են այնպիսի իրավիճակ, երբ գերազանցապես դարձած մարդիկ հաճախ անհատականացնում և վարքի կարգավորիչներ են դարձնում այնպիսի իրադրային-օգտապաշտական արժեքներ, որոնք այս պահին համապատասխանում են իրենց առօրյա շահերին ու պահանջմունքներին: Այս երևույթը կարելի է բնութագրել որպես «անհատականացման եսասիրություն»: Փորձի ու սխալի մեթոդով առաջնորդվող, որոշ իմաստով արկածախնդիր դարձած մարդն ընկալում է միայն սոցիալական իրականության մակերեսի վրա գտնվողը, օգտապաշտ-պատահականը, բայց ոչ օրինաչափ-էությունը, ընկալում է երևույթը, բայց չի ըմբռնում էությունը, կարևորում է «գինը», բայց չի գիտակցում արժեքը: Արդյունքում առօրյա փոխհարաբերություններում մակերեսայնությունը դառնում է մարդկայն վարքը բաղադրող հիմնական գործոն: Այսպիսով, ի տարբերություն բնականոն զարգացող հասարակությունների, ուր հասարակական հարաբերությունների անհատականացման և տիպականացման գործընթացներն ունեն համահասարակական, մայրուղային ուղղվածություն, անցումային հասարակություններում այդ գործընթացները, արտածվելով պահի եսասիրական, սոսկական շահերից ու պահանջմունքներից, կրում են ընդգծված եսասիրական բնույթ:

Համակարգային տրանսֆորմացիաների փուլում գտնվող հասարակության մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ մարդիկ հայտնվում են յուրատեսակ սահմանային իրադրության մեջ, և հնի ու նորի պայքարը ձեռք է բերում ընդգծված քաղաքական ու գաղափարական ուղղվածություն: «Նոր աշխարհակարգի» ձևավորման ընթացքում բախվում են երկու իրարամերձ աշխարհայացքային և արժեքային համակարգեր: Հասարակության մեջ զուգահեռաբար գործում են ինչպես սոցիալական համակեցության նախորդ՝ անցած փուլին բնորոշ արժեքներն ու հարաբերությունները, այնպես էլ դրանց տրանսֆորմացված, նորացված տարատեսակները: Երևույթ, որը տրանսֆորմացիոն հասարակությունները դարձնում է երկրնորանքային¹¹: Այն կարելի է բնութագրել որպես «սոցիալական զուգահեռականության» սկզբունք, որը բնորոշ է բոլոր անցումային հասարակություններին և դրսևորվում է թե՛ ինստիտուցիոնալ և թե՛ արտաինստիտուցիոնալ հարաբերություններում: Անորոշ հավասարակշռության (անհավասարակշռության) վիճակում հայտնված անցումային շրջանի մարդու համար շատ դժվար է անհատականացնել զուգահեռական հարաբերություններն ու արժեքները: Առավել ևս, որ հասարակական նոր, տրանսֆորմացված հարաբերությունները ներկայացնող սոցիալական ինստիտուցիոնները երբեմն իրենք են տատանվում արժեքների ու նորմերի, անգամ օրենսդրական ամրագրման առնչությամբ¹²: Զուգահեռաբար գործող տարբեր, երբեմն հակադիր հարաբերությունների ու արժեքային համակարգերի միաժամանակյա գոյությունը, բնականաբար, դժվարություններ է հարուցում դրանց անհատականացման և տիպականացման առնչությամբ՝ հասարակության մեջ պարբերաբար առաջացնելով լարվածության լուրջ օջախներ:

Զուգահեռականության սկզբունքը գործում էր նաև առավելաբար կայուն սոցիալիստական հասարակության մեջ: Խորհրդային շրջանի մարդը ևս ապրում էր զուգահեռաբար գործող արժեքային համակարգերում: Նա առերևույթ «պետական քաղաքացու» կողմնորոշում ուներ, իսկ անձնական կյանքում փորձում էր ապրել «ազատ քաղաքացու» գաղափարախոսությամբ¹³: Ըստ այդմ իրականացվում էր հասարակական հարաբերությունների ու արժեքների ան-

¹¹ Տե՛ս Է. Ա. Հարությունյան, նշվ. աշխ.:

¹² Օրինակ, Հայաստանի Հանրապետությունում «Տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի մարտի 8-ի և ապրիլի 7-ի, մայիսի 1-ի և 9-ի հետ կապված խորհրդարանական տեսական քննարկումները:

¹³ Տե՛ս **Е. М. Бабосов**, Катастрофы как объект социологического анализа. «Социологические исследования», 1998, № 9, էջ 23-24.

հատականացման և տիպականացման երկաստիճան գործընթաց: Ընդ որում, այս պայմաններում թե՛ անհատականացումը և թե՛ տիպականացումը «երկշերտ» էր: Մի կողմից անհրաժեշտ էր անհատականացնել և տիպականացնել իշխող քաղաքական կարգերին և գաղափարախոսական արժեքներին համապատասխանող «ճակատային» (ֆասադային) հարաբերություններ, մյուս կողմից՝ անձնական, «խորքային» հարաբերություններ: Ամբողջատիրական երկրում պարտադրյալ հնազանդության դատապարտված, առերևույթ օրինապահ, «պետական քաղաքացին» համակարգից չօտարվելու նկատառումներով անհատականացնում և տիպականացնում էր «ճակատային» հարաբերություններն ու արժեքները: Բայց նույն քաղաքացին ազատ, պետական վերահսկողությունից դուրս և անձնական կյանքում անհատականացնում և տիպականացնում էր իր արժեքային կողմնորոշումներին և անձնական համոզմունքներին համապատասխանող «խորքային» հարաբերությունները: Խորհրդային շրջանի մարդը, որպես կանոն, հասարակական կյանքում «պետական քաղաքացի» էր, անձնական կյանքում՝ «ազատ քաղաքացի»: Պետական կառույցների, տիրապետող արժեքային համակարգերի հետ հարաբերվում էր անհատականացման և տիպականացման «ի համերաշխություն» մոդուսով, իսկ մտերիմների, արժեքային նույն կողմնորոշումների ու համոզմունքների տեր մարդկանց հետ հարաբերվում էր անհատականացման և տիպականացման «խորքային», ողջախոհության «ազատ» մոդուսով:

«Սոցիալական զուգահեռականության» սկզբունքն այլ բնույթ ու պայմանավորվածություն, հետևաբար նաև դրսևորում և իրացում է գտնում դեպի շուկայական, ազատական հարաբերություններն ու արժեքները միտված հետխորհրդային անցումային հասարակություններում: Արմատական տրանսֆորմացիաների փուլում գտնվող այսօրվա «ազատ քաղաքացու» և երեկվա «պետական քաղաքացու» զուգահեռական կարգավիճակների միջև ներանձնային լուրջ պայքար է ընթանում¹⁴: Պետականորեն երաշխավորված նվազագույն պաշտպանվածությանը սովոր, սոցիալական վերահսկողության մշտաբթուն տեսադաշտում գտնվելուն վարժված «պետական քաղաքացու» համար շատ դժվար է հաշտվել «ազատ քաղաքացու» պարտադրանքի հետ: Հասարակության կայուն և գործառության հստակություն ունեցող արժեքներին ու հարաբերություններին սովոր «պետական քաղաքացին», հայտնվելով գաղափարական ու քաղաքական, իրավական ու բարոյական զուգահեռականության մեջ, ուր ամեն ինչ թողնված է անհատի հոգեբանական կարգավորիչներին, դժվարանում է հստակորեն կողմնորոշվել և նախընտրել վարքը բաղադրող դրդապատճառների այն համախումբը, որն առավելագույնս կապահովի նոր, տրանսֆորմացված հարաբերությունների մեջ ներառվելու հնարավորություն: Ահա թե ինչու հետխորհրդային շրջանի անցումային հասարակությունում հայտնված մարդը մերթ ճոճում է նոր ժամանակների (որպես «ազատ քաղաքացի») սուրը, մերթ հին ժամանակների (իբրև «պետական քաղաքացի») վահանով պաշտպանվում: Սոցիալական քառսի, հասարակական հարաբերությունների ու արժեքների վերահսկման ու կարգավորման գործում պետական ներազդեցության բացակայության պայմաններում անընդհատ խորանում է հասարակության և անհատի միջև գոյացած վիճը, սկզբից օտարումը, իսկ այնուհետև անտարբերությունն ու անվստահությունը դառնում են իշխանությունների հետ հարաբերվելու գերակա եղանակներ: Ընդամեն, որքան նվազում է անցյալին վերադառնալու հավանականությունը, նույնքան մեծանում է այն իդեալականացնելու հակումը: Անցյալն իդեալականացնելու հոգեբանական հայտնի երևույթը վաղ թե ուշ ծնում է «փրկչի» գաղափարին ապավինելու՝ անհրաժեշ-

¹⁴ Տե՛ս Ս. Штомпка, Социальное изменение как травма. «Социологические исследования», 2001, No 1; նույնի՝ Культурная травма в посткоммунистическом обществе. «Социологические исследования», 2001, No 2:

տություն: Երբ սոցիալ-հոգեբանական լարվածությունն ու անորոշությունը համակարգի համար դառնում են խրոնիկական հիվանդություն, անխուսափելիորեն ծագում է «փրկչի» պահանջմունք¹⁵: Կարոտախտը փարատելու որոնումներում մեկ «ուժեղ ձեռք» են փնտրում, մեկ անցյալը ներկայացնող քաղաքական ուժ կամ գործիչ:

Եթե «սոցիալական զուգահեռականության» երկշերտությունը սոցիալիզմի շրջանում բնորոշ էր հասարակական հարաբերությունների անհատականացման և տիպականացման առավելաբար անձնային մակարդակին հատուկ գործառույթներին, ապա անցումային հասարակություններում այն գործառույթյան նոր հիմունքներ է գտնում՝ դրսևորվելով ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ մարդկային մակարդակներում: Ինստիտուցիոնալ մակարդակում զուգահեռականությունը պահպանվում է, քանի որ մի կողմից շարունակում են գործել իրենց դարձ ապրած, բայց դեռևս իներցիայի ուժով գոյատևող հասարակական հին ինստիտուտները և դրանց բնորոշ արժեքներն ու հարաբերությունները, իսկ մյուս կողմից՝ տրանսֆորմացիոն գործընթացների հրամայականով պայմանավորված սոցիալական նոր ինստիտուտները: Ընդ որում, թե՛ հին, թե՛ նոր սոցիալական ինստիտուտներում գործում է հարաբերությունների և արժեքների նախորդ համակարգում ձևավորված, զուգահեռական արժեքների միջև անընդհատ ընտրություն կատարելու պարտադրանքին դատապարտված անցումային շրջանի հակասական քաղաքացին: Մարդկային մակարդակում զուգահեռականությունը պահպանվում է շնորհիվ վարքը բաղադրող սոցիալ-հոգեբանական որոշ շարժառիթների առանձնահատկության: Անցումային հասարակության «պետական քաղաքացին» կարոտով է հիշում այն «երանելի» ժամանակները, երբ պետականորեն պաշտպանվում էին աշխատանքի, անվճար կրթության, առողջապահության և սոցիալական այլևայլ ծառայությունների երաշխավորված իրավունքները: Հարաբերությունների և արժեքների նման համակարգն անհատականացրած տրանսֆորմացիոն շրջանի «պետական քաղաքացուն» շարունակում է թվալ, թե սոցիալական բոլոր ծառայությունները, անկախ համահասարակական բարիքի ստեղծման մեջ սեփական ներդրման չափից, պետությունը պարտավոր է տրամադրել բոլորին և հավասարաչափ: Ուստի պատահական չէ, որ երբ զարգացման ազատական, շուկայական-մրցակցային ուղին ընտրած պետությունն սկսում է մասնավորեցման գործընթացը, «պետական քաղաքացին» այն որակում է որպես պետական պարտավորությունների և «հասարակական դաշինքի» խախտում, իսկ «ազատ քաղաքացին»՝ որպես արդյունավետ գործառույթյան միակ հնարավոր օպտիմալ եղանակ: Եթե «անցումային շրջանի տառապանքներին» ենթակա սոցիալական անպաշտպան խմբերն ու շերտերը կարևորում են անվտանգության, արդարության և հավասարության գաղափարները, ապա տրանսֆորմացիոն հարաբերությունների մեջ սահուն ներառված, ազատական հարաբերություններն ու արժեքներն անհատականացրած խմբերն ու շերտերը կարևորում են մրցակցության, պրագմատիզմի ու արդյունավետության գաղափարները: Ահա թե ինչու տրանսֆորմացիոն գործընթացներն առաջինները ներկայացանում են որպես «թալան ու երկրի վաճառք», գլոբալ մշակույթի մեջ ազգային արժեքների տարրալուծում և համաշխարհային բանկի ու արժույթի միջազգային հիմնադրամի թելադրանք, իսկ երկրորդները՝ որպես «արդիականացում», «քաղաքակրթական գործընթացի մեջ ներառում» և աշխարհի հետ համաքայլ շարժվելու կարողություն: Ընդ որում, թե մեկը, թե մյուսն իրենցից կայուն կարգավիճակային խումբ չեն ներկայացնում: Եթե տրանսֆորմացիոն գործընթացները հանկարծ որևէ կերպ բախվեն սրանց անձնական շահերին, ապա «ազատ քաղաքացին» անմիջապես փոխակերպվում է «պետական քաղաքացու», «պետա-

¹⁵ Տե՛ս **В. Одейник**, Психология политики. Политические и социальные идеи Карла Густава Юнга. Санкт-Петербург, «Ювента», 1996, էջ 141.

կան քաղաքացին՝ «ազատ քաղաքացու»: Տրանսֆորմացիոն այս փոխակերպումները միմյանց կհաջորդափոխվեն այնքան ժամանակ, քանի դեռ անցումային հասարակության մեջ պահպանվում են անհատականացման և տիպականացման առանձնահատկությունները պայմանավորող սոցիալական զուգահեռականության գոյության ու վերարտադրության հիմունքները: Ըստ ամենայնի, սոցիալական զուգահեռականությունը դեռ երկար ժամանակ ուղեկցելու է անցումային հասարակություններում իրականացվող տրանսֆորմացիոն գործընթացներին և կգործառի այնքան ժամանակ, քանի դեռ հասարակության մեջ չի հաստատվել հարաբերությունների ու արժեքների հարաբերաբար գերիշխող որևէ տիպ և դրան համապատասխան սոցիալական նույնքան գերիշխող խավ:

Հասարակական հարաբերությունների և արժեքների անհատականացման և տիպականացման համակարգապահպան գործընթացները գոյության ու ինքնավերարտադրության բնականոն, համահասարակական հուն կմտնեն այն ժամանակ, երբ սերնդափոխությունների արդյունքում «սոցիալիզմի ներքին արքորից» ազատագրված «Homo Sovieticus» մարդկային տիպը, ձերբազատվելով միայն իրեն բնորոշ պարտադիր ձևախեղումներից («պետական քաղաքացի» և «ազատ քաղաքացի»), որոշարկված մտակեցվածքով, որպես անկախ պետության ազատ քաղաքացի, կդառնա հասարակական հարաբերությունների իրական կրողն ու կերտողը, և երբ բոլորի հետ հարաբերվելու գերակա կերպն ու եղանակն ազատ քաղաքացու համար կլինի ոչ թե զոհանք, ցանկապաշտ կուրքի, այլ ճշմարտության իրապաշտ մարտիկի արժանավայել կեցվածքը:

Г. А. СОГОМОНЯН - Особенности индивидуализации и типизации общественных отношений в переходном обществе. - В стабильно развивающихся обществах системообразующие процессы индивидуализации и типизации общественных отношений и ценностей имеют общесоциальную направленность. Иной смысл и содержание они получают в переходном обществе. С этой точки зрения в статье анализируются особенности функционирования этих процессов.

В переходном обществе отношения и ценности носят релятивный, ситуативный характер, чем и обусловлена особенность их индивидуализации и типизации, выходящаяся из сиюминутных эгоистических потребностей и интересов («эгоизм индивидуализации и типизации»). Происходит двухслойная индивидуализация и типизация, что обусловлено одновременным, параллельным существованием отношений и ценностей («социальная параллельность») проявляющаяся в форме дилеммы «государственного гражданина» и «свободного гражданина»). Стабилизация трансформационной системы произойдет только тогда, когда общество вернется к «нормальному» функционированию и самовоспроизводству, когда аномия, маргинальность, сиюминутность и параллельность перестанут быть доминирующей основой индивидуализации и типизации отношений и в обществе утвердится относительно преобладающий тип общественных отношений и ценностей и соответствующий им столь же преобладающий социальный слой.